

ՄԿՏ-Երկծայրի Սուրը

Վերջերս Լոս Էնձըրըս կատարած այցիս՝ բարեբաղդրությունը ունեցայ հանդիպելու “Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներու” ընկերներու: Տպատրիչ եղաւ ինձի համար ականատես ըլլայ այն սեղս գործակցութեան ոգիին որով թէ՛ երիտասարդ թէ՛ ալ տարեց ընկերներ հրահրուած են գործի՛ մեզի եւ մեր ազգին սիրելի Մելգոնեան Վաստատութեան (ՄԿՏ) պահպանման լուծով:

Որքան որ Մելգոնեանցիները մեր ընտանեկան հարաբերություններուն մէջ միասնականությունը եւ համագործակցությունը հասարակ երեսոյթ է՝ ներկայի գործունէություններուն դրդապատճառը ուրախ առիթով մը չէ:

ՎԲԼՄ՝ իրայատուկ տրամաբանութեամբ որոշեց ՄԿՏ՛ն դադրեցնել գոյութենէ: Այս ծրագրուած քայլը ոչ՝ միայն Մելգոնեան եղբայրներու կտակը ոտնակոխ կ’ընէ՝ այլ Վայ ազգային ինքնութեան եւ աւանդութեանց դէմ հարուած մը տուած կըլլայ:

ՄԿՏ Միջազգային Սանուցը այս հարցը խիստ լրջութեամբ կը դիմատրէ, արդէն իսկ պէտք եղած իրաւագիտական միջոցներով շարժումի անցած ՎԲԼՄի աններելի որոշման դէմ: Կարելի է երեսակայել արդեօք նիւթական եւ ժամանակի աննախընթաց ու անպէտ կորուստը երկուստէկ: Ներկայ կացությունը նոյնիսկ այս ուշ ժամուն կարելի է փրկել՝ եթէ ՎԲԼՄ յօժարի հրաժարիլ իրենց կործանարար ուղղիէն:

Այս կացութեան փրկությունը սակայն չ’իրագործուիր ՄԿՏի գոյատեւությունը սակարկութեան սեղանին վրայ բերելով: Այս կացութեան փրկությունը չ’կայանար ՎԲԼՄի եւ իրենց աններելի որոշման կողմնակից յօթուածագիրերու ներկայացուցած անհիմն պատճառաբանություններու ձանձրանալի կրկնումներով ժողովուրդը եւ մեզ համոզել ջանալով:

Այս պատճառաբանություններուն հեղինակները՝ ՄԿՏի կայուածները ծախելու կրքախառն մտասելերումով՝ բոլորովին կորացած կ’երեւին Մելգոնեան եղբայրներու հիմնական ծրագրին՝ յստակօրէն յայտնուած իրենց կտակին մէջ՝ նկատմամբ ՄԿՏի:

Կտակին ամբողջությունը թորելի է հետեւեալ երկու հատուածներուն մէջ.

ա- ՎԲԼՄը գործունէությունէ դադրելու պարագային ՄԿՏի պատասխանատուությունը փոխանձելի է Վայաստանի Կաթողիկոսին միջոցաւ յանձնախումբի մը՝ որ կարող եւ փափաքով է Վաստատութեան շարունակական գոյությունը ապահովել:

բ- Կարապետ աղա Մելգոնեանի 700.000.00 անգլիական սթերլինի (ջուկներու համաձայն ոսկեղրաս) նուիրատուությունը 1925 թուականին առընթեր մէկ մղոն քառակուսի հողային կալուածին՝ պարտ է պահուիլ դրամատան մը մէջ՝ ուրկէ՛ գոյացած տոկոսն է որ միայն Վաստատութեան ծախսերուն համար պիտի գործածուի:

Վերելի առաջին հատուածը որեւէ մէկուն՝ ներարեալ ՎԲԼՄին՝ չ’արտօներ Վաստատությունը փակել, վաճառել կամ ընել այն ինչ որ հաճոյ կը թուի հոգաբարձու մարմնին:

Իսկ երկրորդ հատուածը յստակօրէն կը նշէ հիմնադրասին անձեռնմխելի բնոյթը: Ուրեմն կտակին տրամադրութեանը համաձայն ՄԿՏն ոչ՝ նիւթական անձուկ պայմաններու, ոչ՝ ալ փակուելու դէկնածու դիրքի մէջ մնալու հիմ ու պատճառ ունի: Թէ՛ ՄԿՏն կը գտնուի մխրձուած այս ցաւալի կացութեան մէջ՝ մենք միայն ՎԲԼՄն է որ կը տեսնենք այս բեմադրութեան հեղինակներն ու պատասխանատուները:

Մելգոնեանը փակելու որոշումով ՎԲԼՄը իրենց իրաւատութեան սահմաններէն դուրս քայլ նետած դիրքի մէջ կը գտնուին:

ՄԿՏի հոգաբարձությունը ՎԲԼՄի յանձնուեցաւ՝ Կարապետ Մելգոնեանի, Պուլտոյ Պատրիարքարանի եւ ՎԲԼՄի միջեւ կնքուած երրեակ համաձայնութեամբ մը: ՎԲԼՄը ոչ՝ լիազորություն ոչ՝ ալ ինքնակոչ որոշումներու ազատությունը կը վայելէ ՄԿՏն մահուան դատապարտելու: ՄԿՏի փակումը ըստ Կտակին՝ խնդրոյ առարկայ չկրնար ըլլալ:

ՎԲԼՄին գործակից՝ Վաստատութեան փակման բարիքներուն փողը հնչող յօրուածագիր անձեր մեզ կը թելադրեն դադրեցնել “ձեխարձակումները” Բարեգործականին դէմ: Վետաքրքրական է թէ ժայրարձակումներով մեզի սիրելի 80 ամեայ ՄԿՏն քարերու կոյտի մը վերածելու նպատակը հետապնդողներ զգայուն դառնած են ձեխարձակումներու: Կը փափաքիս՝ նաեւ անմիջապէս յիշել

թէ մեր միակ նպատակը Կտակին լրիւ պաշտպանութիւնն է՝ երբէք ձեխարձակում կամ զգացականէն դրոշմած:

Սոյն յօդուածագիրները որոնք կենթադրենք ՎՖԸՄի տեսակետներն են որ կը յայտնեն, կը ներկայացնեն զանազան անհիմն ու անփաստելի գաղափարներ որպէս իրական ու արդարանալի պատճառներ ՄԿՏն փլատակելու իրենց զգացական որոշումով:

Յաճախ կ'ըսուի թէ պէտք է զատորոշենք ՎՖԸՄը իր կեդրոնական վարչութիւնէն քանզի որոշումներու պատասխանատուները վարչութեան անդամներն են: Այս տեսակետը անկասկած ընդունելի պիտի ըլլար մեզի եթէ ՎՖԸՄի մասնաճիւղերը մասնույի հանրային յայտարարութիւններով կեդրոնական վարչութեան որոշման դէմ դիրք առած ըլլային: Երախտապարտութեամբ տեղեակ ենք Կիպրոսի, Զուիցերիոյ մասնաճիւղերուն եւ որոշ անհատ անդամներու հրաժարական դիրքատրումը կեդրոնական վարչութեան աններելի քայլին դէմ: Ուրեմն այս տուեալներուն հենելով մեր միակ եզրակացութիւնը հետեւեալն է. ՎՖԸՄի ընդհանուր կազմակերպութիւնը իրենց լռութեամբ, Վայ ոստումնական բեղուն կեդրոն սը քանդելու արարքին մասնակից կ'ըլլան:

Որքան որ իրաքանչիւրս ունինք մեր անվիճելի տեսակետները՝ հետեւեալ կոչը կ'ուղղեմ իմ Մելգոնեանցի դպրոցակիցներուն որոնք զանազան պատճառներով ՎՖԸՄի ՄԿՏն բնաջնջելու փափաքին կողմնակից դիրքի մէջ կը գտնուին:

Ուշադրութեամբ կարդացէք Մելգոնեան եղբայրներու կտակը: Զգացականէն չտարուած վերլուծեցէք ձեր դիրքորոշումը յիշելով հետեւեալները.

Յիշեցէք ու մի՛ սոռնաք. ՎՖԸՄը չէր որ տուաւ ձեր անվճար ու բարձրորակ ոսումը: Մելգոնեան եղբայրներն էին անոնք:

Յիշեցէք ու մի՛ սոռնաք, եթէ կը հաւատաք թէ ՄԿՏի ուսումնական մակարդակը ներկայիս չէ այն ինչ որ ձեր շրջանին էր, յանձանքը մեր Վաստատութեանը չէ այլ միայն ՎՖԸՄին:

Ասէ՛նայնդէպս՝ ՄԿՏի ներկայ շրջանավարտներու GCEի քննութեանց յաջողութիւնները կը ջրէ այդ տեսակետը:

Յիշեցէք ու մի՛ սոռնաք, երբ կ'ըսուի թէ ՎՖԸՄը ՄԿՏի փակումով “ժամանակին համաձայն քայլ կը յարմարցնէ” փուճ ասացուածք մըն է այս որ կը ներկայացուի իբր տեսակետ: Սակայն երբ այսպիսի տեսակետ սը կը քանդէ Մելգոնեան բարեարներուն տեսիլքը՝ այդ որեւէ մէկուն օգնութեան արժանի նպատակ ըլլալէ կը դադրի: Կարծէ՛ նաեւ կրկնել թէ Մելգոնեան եղբայրներուն տեսիլքը ՄԿՏն միշտ շարունակել է առանց փակելու, առ այդ՝ նիթական բոլոր միջոցները լրիւ նախատեսած են:

Յիշեցէք ու մի՛ սոռնաք, անցեալի մեր պատմական կրթատեղիներուն ցաւալի փակումները օրինակ չեն կրնար ծառայել կատարելապէս ինքնաբաւ եւ գործոն ՄԿՏն գոյութենէ՛ դադրեցնելու: Դպրոց փակելը մեր հայ էութեան ու նկարագրին մաս չկազմեր:

Յիշեցէք ու մի՛ սոռնաք, երբ մեր կրթութեան օճախը քանդուելու վտանքին մէջ է ՎՖԸՄի հրահանքով, ձեր երախտագիտութեան ու խղճի պարտականութիւնն է մեր բոլորին միանալ հասարակաց ոսոխին դէմ:

Յիշեցէք ու մի՛ սոռնաք, եթէ ՎՖԸՄը յաջողի այս ծրագրուած աններելի փակումով՝ ոչ միայն քանզի քանզի գործակից եղած պիտի ըլլաք Սփիւրքահայ կրթական կարեւորագոյն օրրաներէն մէկուն խաչելութեան՝ խիստ հաւանաբար օժանդակած պիտի ըլլաք նաեւ ՎՖԸՄի ցաւալի տարրալուծման: Կը տարակուսինք թէ այս հարձին շուրջ՝ Բարեգործականի վարիչները Վայ ազգին բազմերակը զգայնութեամբ քննած ըլլան:

Մասնույի մէջ յիշուած է թէ ՄԿՏի հիմնադրութեան 75րդ տարեդարձի տօնակատարութեան ընթացքին Լոս Էնճըլլոս ի մէջ սենք կարող չեղանք մէկ միլիոն տոլար հաւաքել ՎՖԸՄի հաշտոյն՝ Մելգոնեանի փրկութեան համար:

Իմ գաղափարով՝ այդ ծրագիրը հապճէպով՝ վերջին ժամուն յղացուած (թերեւս ալ կանխամտածուած) ձեռնարկի սը երեւոյթը ունէր ՎՖԸՄի ներկայացուցիչներու կողմէ, անկասկած մեզ՝ “գիւղացի բանտոր ասբոխս” զբաղ պահելու նպատակաւ մինչեւ որ ՄԿՏի փակման լրիւ ծրագիրները սշակուէին:

Նախախնամությունը ընդմիջեց ու դրամահաւաքը չիրագործուեցաւ: Բարեբախտաբար՝ որովհետեւ կտակին նիւթական հայթայթանքին համաձայն ՄԿՆ՝ դրամի բաց պէտք չէ ունենայ:

Այսօր ունինք բոլորովին տարբեր կացութիւն մը մեր առջեւ: Մեր Նաստատութեան գոյութիւնը հնձուորին բերքն է դառցած: Աշխարհի չորս ծագերէն Մելգոնեանցիներու սիրտերն ու քսակները բացուած կը հոսին դէպի հոն ուր մեծ դիմադրութիւնը տեղի պիտի ունենայ: Վրթովուած՝ անթիւ Նայեր նաեւ միացած են մեր շարքերուն զօրակից ըլլալու մեր մահու ու կենաց պայքարին՝ ՄԿՆի պատմական գոյութիւնը վերագրաւելու ու յաւերժացնելու նպատակաւ, Մելգոնեան եղբայրներու տեսիլքին ու փափաքին համաձայն:

Որեւէ Նայ որ կ'ըզգացուի այս կացութենէն՝ եթէ փափաքի նուիրատուութիւն ընել մեր նպատակին յաջողութեան համար կը խնդրուի այցելել հետեւեալ հասցէն www.melkonianforever.org

Այժմ լուրջ հարցը հետեւեալն է: Կ'արժէ կասեցնել այս փոթորիկը իր հարակից վնասներովը՝ մասնաւորաբար ՆԲԼՄի:

Մեր դիրքը հստակ է: Մելգոնեան հաստատութեան շարունակականութիւնը անսակարկելի է, հիմնուած կտակի տրամադրութեանց տուեալներուն վրայ:

Յօդուածագիրներու համաձայն ՆԲԼՄ զգացականէ դրդուած չէ որ կը գործէ: Ահա ներկայ կացութիւնը առիթը կ'ըստեղծէ այդ վարկածը փաստելու:

Ուրեմն կան երկու ընտրութիւններ. առաջինը շինիջ ուղղին է: Երկրորդը՝ թողույ որ ներկայ դիրքատրումները իրենց անխուսաբելի բախումովը պսակուին:

Ա) Շինարար քայլը ՆԲԼՄի Կեդրոնական Վարչութիւնէն պէտք է գայ մեր փաստաբաններուն տեղեկացնելով թէ ՄԿՆ փակելու ծրագիրը լզուած է ու պատրաստ են բանակցութիւններու մտնել Մելգոնեան Միջազգային Սանուցին հետ՝ ՄԿՆի “տրձակ”ը փոխանձելու առաջադրութեամբ: Այս նպատակը պէտք է նաեւ տեղեկացնել Էջմիածնի Կաթողիկոսին՝ ըստ Կտակին:

Բ) Երկրորդ ուղղին՝ լռութեամբ ու անտարբերութեամբ դիմատրել այս խնդրին լրջութիւնը. ծնունդ տալով դատարաններու մէջի պայքարին: Այն անհաւանական պարագային եթէ ՆԲԼՄի կեդրոնական վարչութիւնը արտօնուի գործադրել իր ծրագիրը ու հասնի իր փափաքի “յաղթանակին”, այդ արարքին դափնին պիտի ըլլայ անհաստատութիւնը դառն ու թանկ: Որովհետեւ այս հարցին վերջին դատախազը անխուսաբելիօրէն պիտի ըլլայ Նայ ժողովուրդը:

“Ինչ է վաստակը այն անձին որ կը շահի ամբողջ աշխարհը բայց՝ կը կորսնցնէ իր հոգին:”

Ահա երկժայրի սուրը Մելգոնեանի:

Առման Այալթին

Վէնքովոր Գանատա